Արձանագրություն N 3

ՀԾԿՀ-24/3-ԳՀԾՁԲ ծածկագրով էլեկտրոնային ձևով գնանշման հարցման միջոցով աուդիտորական ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

12 ապրիլի 2024թ.
ժամը 10:00

Մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Մեսրոպ Ղարիբյանը, անդամներ՝ Լուսինե Մկրտչյանը, Աստղիկ Հակոբջանյանը, Լիլիթ Մկրտչյանը և քարտուղար՝ Էդգար Շադյանը: Բացակայում է Լիլիթ Երեմյանը:

Օրակարգ
Պարզաբանման հարցման վերաբերյալ

ՀԾԿՀ-24/3-ԳՀԾՁԲ ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Մեսրոպ Ղարիբյանը նիստը հայտարարեց բացված և ներկայացրեց 2024 թվականի ապրիլի 11-ին ժամը 18:11-ին ստացված պարզաբանման հարցման բովանդակությունը.

«Հայտնում ենք, որ ՀԾԿՀ-24/3-ԳՀԾՁԲ ծածկագրով գնանշման հարցման հրավերի Հավելված N 1 Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի մեջ ամրագրված պահանջը առ այն, որ աուդիտ իրականացնող անձը կարող է հանդիսանալ ընկերություն կամ ընկերությունների միավոր/կոնսորցիում և պետք է հանդիսանա Մեծ Քառյակի (Big 4) միջազգային հեղինակավոր ցանկում ներառված աուդիտորական կազմակերպության անդամ կամ այլ մասնակից համարում ենք ոչ մրցակցային, անհամաչափ և խտրական: Վերոհիշյալ պահանջը չի ապահովում պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում: Հետևաբար՝ այն հակասում է Գնումների մասին ՀՀ օրենքի հոդված 3-ով ամրագրված սկզբունքներին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ խնդրում ենք փոփոխել Հավելված N 1 Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի մեջ ամրագրված պահանջը առ այն, որ աուդիտ իրականացնող անձը կարող է հանդիսանալ ընկերություն կամ ընկերությունների միավոր/կոնսորցիում և պետք է հանդիսանա Մեծ Քառյակի (Big 4) միջազգային հեղինակավոր ցանկում ներառված աուդիտորական կազմակերպության անդամ կամ այլ մասնակից պահանջը և ապահովել Գնումների մասին օրենքի Հոդված 3-ով ամրագրված սկզբունքների կիրառումը գնումների գործընթացում»:

- **Հանձնաժողովն ուսումնասիրեց և որոշեց տալ հետևյալ պարզաբանումը.**

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի ներդրումային գործունեության տեխնիկական աուդիտի իրականացումը մեծ քառյակում ներառված կազմակերպություններին պատվիրակելու հետ կապված հարկ է նշել, որ սակագների հաշվարկներում ներառվող ներդրումների ծավալների որոշումը գտնվում է հանձնաժողովի իրավասությունների տիրույթում: Նշված ընկերություններում ներդրումների ծավալի էական աճը հաշվի առնելով ինչպես նաև ներդրումների գնահատման գործընթացն ավելի բաց, թափանցիկ ու վստահելի դարձնելու նպատակով որոշում կայացվեց, ներգրավել հեղինակավոր կազմակերպություն տեխնիկական աուդիտ իրականացնելու նպատակով: Հայաստանի Հանրապետությունում գործում են շուրջ 30 աուդիտորական կազմակերպություններ, սակայն աշխատանքի արդյունավետությունը ապահովվելու նպատակով առաջին մրցույթների ժամանակ սահմանված էր, որ կարող են մասնակցել միայն Big 10-ում ներառված կազմակերպությունները:

Big 10-ը Big 4-ով փոխարինելու մոտեցումը նպատակ ունի էլ ավելի բարձրացնել մատուցվող ծառայությունների որակը և նպաստել կարգավորվող ընկերությունների համար սահմանվող սակագների հաշվարկներում ներառված ներդրումների ծավալների որոշման հիմնավորվածության

բարձրացմանը, այլ ոչ թե մասնակիցների քանակի կրճատմանը, կամ խտրական մոտեցումների կիրառմանը: Միևնույն ժամանակ Big 4-ը Big 10-ով փոխարինելու դեպքում նման հարցադրում կարող են բարձրացնել նաև Big 10-ում չներառված աուդիտորական կազմակերպությունները:

Ավելին, հաշվի առնելով, որ և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն իրենց ներդրումային գործունեության իրականացման համար միջոցներ կարող են ներգրավել և ներգրավում են միջազգային հեղինակավոր կազմակերպություններից (IFC, WB, EBRD, ADB և այլն), ու հաշվի առնելով, որ իրականացվող ներդրումներն ուղղվում են Հայաստանի Հանրապետության կարևորագույն ենթակառուցվածքների վերազինմանը և զարգացմանը, ուստի այդ կազմակերպություններում ընկերությունների վարկունակության բարձրացման նպատակով ևս նպատակահարմար է համարվել վերջիններիս ներդրումային գործունեության տեխնիկական աուդիտի իրականացումը վերապահել Big 4-ում ներառված կազմակերպություններին:

Նշված մոտեցումը առաջին անգամ չէ, որ կիառվում է պետական գնումների ժամանակ, և նման պահանջ սահմանված է նաև ՀՀ կառավարության մի շարք որոշումներով (հղումների կլինեն ստորև):

https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=186893

https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=184299

https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=160719

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0, բացակա 1:

Գնահատող հանձնաժողովի

նախագահ		Մեսրոպ Ղարիբյան
անդամներ		Լուսինե Մկրտչյան
		Աստղիկ Հակոբջանյան
		Լիլիթ Մկրտչյան
քարտուղար		Էդգար Շադյան